№ 212 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 1901 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 № 212

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղատնտեսական Թանգարան. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հայոց Թատրոն. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հարիւրամեայ յօբելեան։

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

—

Ներկայ ցուցահանդէսը առիթ է տալիս մեզ մի առաջարկություն անելու։ Մենք աչքի առաջ ունենք հանդէս բերել գիւղատնտեսական մուզէյ կամ Թանգարան կազմելու հարցը։

Այդ Թանգարանի կարեւորությունը այժմ շատ զգալի է դարձել և ամեն անգամ, երբ ծագում են մեր երկրի գիւղատնտեսության վերաբերեալ խոշոր և գործնական հարցեր, Թանգարանի բացակայությունը աչքի է ընկնում, իբրև խոչընդոտ և աննպաստ մի հանգամանք։

Թանգարանի միտքը ծագել է մի քանի անգամ և Թանգարանի սկզբնաւորությունը ու հիմքը նոյն իսկ դրված են կովկասեան Գիւղատնտեսական ընկերության մէջ։ Այնտեղ դեռ վաթսուն և եօթանասուն Թուականներին սկսեցին ժողովել մեր երկրի զանազան մասերից արմտիքների, հունձերի, գործիքների նմուշներ և կազմվեց մի փոքր Թանգարան։ Սակայն ապագայում այդ Թանգարանը չը ճոխացաւ, չը մեծացաւ, չը հարստացաւ և մնաց նոյն նախկին դրության մէջ, դարձաւ բոլորովին անհամապատասխան մեր ներկայ, ժամանակակից պահանջներին։

Այժմ կարելի էր օգտվել կովկասեան ցուցահանդէս բերված բազմաթիւ արդիւնքներից զգալի կերպով լրացնելու այն պակասությունը, որ կայ այդ Թանգարանի մէջ և տալ նրան մի յայտնի ատիճանի լիակատարություն։ Երբ արդիւնքների մասը կազմակերպված կը լինի, այն ժամանակ հնարաւոր կը լինի հոգալ գործիքներ ձեռք բերելու, քարտէզներ, աղիւսակներ կազմելու, նոր հերբարիումներ ժողովելու և բոլորը սիստեմի վերածելու։

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերությունը պէտք է ուշը դարձնէ ներկայ խնդրի վրա և օգտվի դէպքից մի կարեւոր պահանջի լիությունն տալու։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Պարիզում մի նոր հայերէն թերթ էլ սկսեց հրատարակվել։ Դա մի փոքրիկ ամսագիր է, 16 փոքրագիր երեսներից կազմված մի տետրակ, որի անունն է «Ազատ Խօսք»։ Խմբագրում եւ հրատարակում է այդ փոքրիկ ամսագիրը պ. Երուանդ Օտեան, պօլսեցի գրագէտ, Շահնազարի «Հայրենիքի» աշխատակիցներից մէկը։ Պ. Օտեան անուն է վաստակել իբրեւ ֆէլիէտօնիստ։ Եւ նրա այս ամսագիրն էլ ծայրէ ի ծայր ֆելիէտոնական է։ Ծաղրի մէջ ամենից լաւ է արտայոլվում հասարակական կեանքի հիւանդոտ կողմը, մանաւանդ երբ ծաղրողը տոգորված է ազնիւ զգացմունքներով, միանգամայն անկախ է եւ գաղափարական մարդ։ Կ. Պոլիսը հայոց ազգին տուել է մի աննման երգիծաբան, որի ստեղծած տիպերը, ինչպէս, օրինակ, «Մեծապատիւ Մուրացկանները», դեռ երկար ժամանակ կապրեն մեր մէջ իբրեւ կեանքից վերցրած գեղեցիկ պատկերներ։ Ինչ կը տայ պ. Օտեան իր ամսագրի մէջ—մենք դեռ չը գիտենք։ Առ այժմ մեր ընթերցողներին ճաշակ տալու համար դնում ենք այստեղ «Ազատ Խօսքի» փոքրիկ յօդուածներից մէկը.

Ազգաւոր երրորդությունը

Կատաղի, կամ եթէ կուզէք խեղկատակ, գորտամկնամարտը, զոր ժամանակէ մը ի վեր իրարու դէմ կը մղեին երեք քաջազուններ, պ.պ. Մ. Ջերազ, Ա. Զօպանեան եւ Ս. Հախումեան, հաշտությամբ վերջացած է։

Այս դէպքը, որ ժամանակակից հայ մուրացկանության համար կարեւոր պարագայ մըն է, կարժէ պատմել հաւատօտ կերպով։

Պ. Մանթաշեան վերջին անգամ Պարիզ հասնելուն առաջին օրը, դիպուածական զուգադիպությամբ մը, գրեթէ անգիտակցաբար, մեր երեք ոսոխները Ոսկի Հորթին պանդոկը՝ իր ննջասենեկին դրան առջեւ իրարու կը հանդիպին։ Հազիւ խոժոռ, բզկտիչ նայուածքներու ճակատամարտի մը սկսած, յանկարծ կը լսուի նրբանցքին մէջ ոռնաձայնը Մեկենասին, որ գիշերազգեստով ու ներքնավարտիքին կապիչները գետին քարշտելով կը յառաջանայ։ Գոհ ու անձնդիւր ճառագայթում մը կայ դէմքին վրա, որ արդիւնքն է անշուշտ բնական պարտք մը կատարած ըլլալու խղճի հանդարտության։ Երեք «ինտելիկէնտ»-ները «Ան է» կը մրմռան սրտատրոփ եւ կառնեն այն աղաչաւոր մուրացկանի դիրքը, որ միշտ ատորնացուցիչ է, որչափ ալ «խրոխտաբար» ընելու ջանք թափուի։

Պ. Մանթաշեան էշրէֆ սահաթի մը մէջ է ու ոսկեփայլ ժպիտ մը կը թրթռայ դէմքին վրա։

Պ. Մինաս կը փութայ ննջասենեկին դուռը բանալ, պ. Հախումեան եւ Զօպանեան ընդ առաջ կը դիմեն թեթեւցնելու համար «բարերար»-ը ձեռքը բռնած ղենջակէն։

—Ի՞նչ կը սլքտաք այստեղ, կրսէ ներողամիտ չեչտով մը պ. Մանթաշեան, եկէք տեսնեմ... երեւի իմ գալը իմանալով քներնիդ չէ տարել։

Այս խօսքերուն մինչ պ. Մինաս Ջերազ եւ Ս. Հախումեան քծնաբար կը ժպտին (անարգ հոգիներ), պ. Ա. Զօպանեան, հաւատարիմ իր դաւանած սկզբունքին, «խրոխտաբար» կը ժպտի (հպարտ հոգի)։

Վայրկեան մը եւաքը, պ. Մանթաշեան երկնցած է բազմոցին վրա ու Լ'Արմենիի, Անահիտի եւ Ժամանակի խմբագիրները դէմը շարված։

—Նատէք, նատէք։

Ու ահա խօսակցությունը կը սկսի եւ պ. Մանթաշեան կիմանայ թէ այդ երեք պարոնները, որոնք իր ննջասենեկին դրան առջեւ միացած էին՝ գրական հրապարակին վրա անհաշտ թշնամիներ են իրարու։

—Խե՛ղ, գիժցել էք դուք, կը գոչէ զարմանքով, քիչ մը յանդիմանական, քիչ մըն ալ ծաղրական շեչտով մը, ինչո՞ւ էդպէս իրար էք հարձում հրապարակի վրա... միթէ ամէնքդ էլ մի գաղափարի, մի սկզբունքի, մի նկարագրի մարդիկ չէք, էլի ինչ քէօրէ-օղլի պան է այդ... երբ խնդիրը փող խրնդրելու մասին է, ամէնքդ էլ միաբանությամբ շտապում էք ինձ մօտ, ինչո՞ւ նոյն միաբանությամբ չէք վարվում ձեր թերթերի մէջ... ախը ես ձեզ լաւ ճանաչում եմ, ամէնքդ էլ իրար արժում էք հաւասար չափով... աբի համբուրուեցէք։

—Բայց ներեցէք, տէր բարերար, դիտել կուտայ պ. Զօպանեան, իրաւ պ. Ջերազի եւ իմ նպատակները նոյն են, բայց միջոցներու մասին իրարմէ բոլորովին կը տարբերինք... անիկա քծնաբար մուրացող դպրոցին կը պատկանի, մինչդեռ ես «խրոխտաբար» պահանջող դպրոցին պատն եմ. այս երկու դպրոցներուն ուղղության եւ ձգտումներուն մասին խմբագրականով մը երկարօրէն գրած եմ «Անահիտ»-ի մէջ...

—Ես չեմ հասկանում այդ քէօրէ-օղլի տարբերությունները, խե՛ղ ես փիլիսոփայ չեմ... մինդ քծնաբար է ուզում, միսդ խրոխտաբար, բայց իմ գրպանէս եկած փողը երկուսիդ համար էլ նոյն է, աբի համբուրուեցէք։

—Բայց ներեցէք, պարոն Մանթաշեան, ես խրոխտաբար...

Պ. Մանթաշեան անհամբերության շարժում մը կընէ, ոտք կ'ելլէ, դարակէն քանի մը հատ հարիւրնոց պանքնոթ կառնէ ու զանոնք մատուրներուն ծայրովը օդին մէջ ճօճելով կը կրկնէ.

—Աբի չուտ համբուրուեցէք, եթէ ուչ...

Դեռ սպառնալիքը չաւարտած երեք անհաշտները իրարու գիրկ կ'իյնան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

—

Թիֆլիսը տօնում է ռուսաց տիրապետության տակ մտնելու հարիւրամեայ տարեդարձը։ Քարթալինիայի եւ Կախեթի միացած թագաւորությունների մայրաքաղաք Թիֆլիսն էր, որ բանակցություններ էր վարում ռուս կառավարության հետ, նա էր, որ ընդունեց իր մէջ ռուսաց զօրքերը եւ ամենից առաջ տուեց հպատակության երդումը։ 1801 թուականին ռուսաց սեփականություն դարձողը ամբողջ Վրաստանը չէր, այլ նրա արեւելեան մասը միայն։ Դա մի փոքրիկ երկիր էր, 300 վերստ երկարությամբ եւ 280 վերստ լայնությամբ, եւ ունէր մօտ 160,000 ազգաբնակություն։ Թիֆլիսը այդ երկրի սիրտն էր եւ ռուսաց տիրապետության համար միջնաբերդի դեր կատարեց։ Վրացիները կամենում էին, որ յայտնի իրաւունքներով, դաշնադրական սկզբունքով մտնեն Ռուսաստանի իշխանության տակ. բայց ռուսաց կառավարությունը անպայման հպատակություն էր պահանջում։ Առաջացան անբաւականություններ, խլրտումներ, նոյն իսկ ապստամբական շարժում։ Թիֆլիսը հեռու էր պահվում այդ բոլորից. լինելով ռուսաց զօրքի յենակէտ, նա միայն աննշան անբաւականություն ցոյց տուեց միացման հրովարտակի յայտարարության ժամանակ, իսկ այնուհետեւ նա մնաց հաւատարիմ իր նոր տիրոջ, թէեւ նրա շրջակայքում շարունակվում էին անպտուղ փորձեր՝ վրաց թագաւորությունը պահպանելու համար։

Եւ այսօր էլ Թիֆլիսը ամբողջ Կովկասի կողմից կատարում է տօնախմբություններ այդ պատմական խոշոր դէպքի հարիւրամեակի առիթով։

Վրաստանի միացման պատմությունը ունի շատ հարուստ գրականություն։ Երկար ու մանրամասն նկարագրել են այդ դէպքը թէ ռուս եւ թէ վրացի հեղինակներ։ Այս քանի օրերը, յօբելեանական տօնախմբությունների առիթով, այդ գրականությունը հարստացաւ մի նոր հետազօտությամբ էլ, որ տպագրված է Պետերբուրգում *) եւ որ, մեր կարծիքով, մի շատ լուրջ քննական տեսություն է, առաջինը իր տեսակի մէջ։

Մենք այսօր Վրաստանի միացման դէպքերը չը պիտի նկարագրենք։ Դեռ 1899 թուին մենք «Մշակում» մի համառօտ տեսություն նուիրեցինք այդ իրողության, իսկ այս տարի, Յովսէփ կաթողիկոս Արղութեանի կենսագրության մէջ, որ տպվեց «Մշակում», բացատրեցինք այն դերը, որ կատարել են հայերը այդ գործի մէջ։

Վրաստանի միացումը չէ կարելի համարել զուտ վրացական գործ։ Վրաստանում եւ մանաւանդ Թիֆլիսում հայերը կազմում էին ազգաբնակության մի կարեւոր դասակարգ. դա «երրորդ» անուանված դասակարգն է, այսինքն փողատէր, առեւտրական եւ արդիւնագործական դասակարգը։ Եւ որովհետեւ բուն վրաց ժողովուրդը շատ աննշան ներկայացուցիչներ ունէր այդ դասակարգի մէջ, ուստի հայերը, ուժեղ իրանց դիրքով եւ հարստությամբ, նշանաւոր դեր էին խաղում նաեւ պետական գործերի մէջ։ Յայտնի է, որ Թիֆլիսի հայերը ռուսական կուսակցության էին պատկանում. յայտնի է նոյնպէս, որ հայ իշխանները—Բէհբութեաններ, Արղութեան—վրաց արքունիքում միշտ ռուսաց հպատակություն ընդունելու միտքն էին արծարծում։ Այն հանգամանքը, որ միացման հրովարտակը շատ շքեղ հանդէսով հայ եկեղեցում կարդացվեց եւ այդտեղ ներկայ էին եւ վրաց արքայորդիներն ու հոգեւորականությունը, մի պարզ վկայություն է թէ հայերը որքան գործունեայ դեր էին կատարում այդ անցքերի մէջ։

Եւ բնական էլ է, որ այդպէս լինէր։ Հայերը դրանից առաջ մի ամբողջ դար ամեն ջանք գործ էին դրել, որ ռուսները իրանց հովանաւորությունը տարածէին Անդրկովկասի քրիստոնեաների վրա, իրանց զօրքերով ազատէին նրանց մահմեդական լուծից։ Եթէ վրացիները իրանց թագաւորությունն էին ուզում ամրացնել ռուսաց հովանաւորության տակ, հայերն էլ ունէին իրանց քաղաքական ծրագիրը, ունէին իրանց քաղաքական մարմինը, որ պիտի կազդուրվէր, մեծանար ու կատարեալ անկախություն դառնար նոյն ռուսական հովանաւորության տակ։ Հայ մէլիքներն էին այդ քաղաքական մարմինը։ Երկու ազգերն էլ իրանց նուիրական ձգտումների մէջ մի եւ նոյն ճանապարհով էին գնում, մի եւ նոյն վերաբերմունքն էին գտնում ռուսաց կառավարության կողմից։ Երկուսի միությունը մի ընդհանուր գաղափարի համար—այսպէս էր թելադրում ռուսաց քաղաքականությունը։ Եւ մենք տեսնում ենք, որ XVIII դարի երկու ամենանշանաւոր շրջաններում, երբ անդրկովկասեան քրիստոնեաների ազատության հարցը ռուս կառավարության լուրջ ուշադրության առարկայ էր դարձել, վրացիները եւ հայերը միասին էին։ Պետրոս Մեծի ժամանակ Վախտանգ թագաւորն էր միացնում հայ եւ վրացի զօրքերը, իսկ Եկատերինա Մեծի ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանն էր երկու ազգերի ձգտումների թարգման հանդիսանում եւ այդ ձգտումների իրագործման մէջ հայ-վրացական քաղաքական միությունը գլխաւոր հիմքերից մէկն էր կազմում։

Մենք ասացինք, որ Վրաստանի մի մասն էր 1801 թուականին միացնվում Ռուսաստանին։ Տեսնենք այժմ թէ երկու քրիստոնեայ ազգերի վերաբերմունքը դէպի ռուսաց տիրապետությունը ինչ ընթացք ստացաւ այդ առաջին քայլից յետոյ։

Թիֆլիսում հաստատվելը առաջին գործն էր։ Այնուհետեւ ռուսաց իշխանությունը տարածվում է զէնքի ոյժով։ Անդրկովկասում այլ եւս չը կար Վրաստանի պէս մի քրիստոնեայ երկիր, որ ինքը խնդրէր ընդունել իրան ռուս հպատակների շարքը։ Մնացած բոլոր տեղերը մահմեդական իշխանության տակ էին գտնվում։ Իսկ արեւմտեան Վրաստանում դեռ շարունակում էին գոյություն պահպանել անկախ իշխանություններ։

Թողնելով, որ այդ իշխանությունների միացնելու հարցը վճռէ ինքը, ժամանակը, ռուսները, Թիֆլիսում հաստատվելուց յետոյ, իկոյն արշաւանքներ սկսեցին դէպի երկրի արեւելեան եւ հարաւային կողմերը. Բագուն, Գանձակը, Երեւանը դարձան պատերազմական բեմեր. Ղարաբաղի խանը թէեւ յօժարակամ հպատակություն յայտնեց Ռուսաստանին, բայց գործում էր պարսկական նենգամտությամբ, խաբում էր, այնպէս որ Ղարաբաղում ռուսաց զօրքերի համար մի քանի անգամ վտանգաւոր դարաններ սարքվեցան։

Ահա այդ արշաւանքների ժամանակ հայերը միացած էին ռուս զօրքերի հետ. նրանք ոչ միայն ուղեցոյց էին դառնում, ոչ միայն ընդունում էին ռուս զինուորներին իրանց տներում եւ հեշտացնում էին նրանց ապրուստի հարցը, այլ եւ մասնակցում էին պատերազմական գործողությունների մէջ։ Յայտնի է Ներսէս Աշտարակեցու գործունէությունը. այդ եռանդոտ հոգեւորականը ռուսաց բանակում էր գտնվում, ոգեւորում էր հայերին։ Ցիցիանովի անսպասելի արշաւանքը Երեւանի վրա պահպանել է իր պատմության մէջ Մէլիք-Աբովի եւ նրա որդու քաջագործությունը։ Շահբուլաղում փակված ռուս զօրաբաժինը կոչնչացվէր, եթէ չը լինէին շրջակայ գիւղերի հայերը, որոնք ազատեցին այդ զօրաբաժինը պարսից ահագին զօրքի ձեռքից։ Այսպիսի միջնադէպքերով լի են կովկասեան պատերազմների տարեգրությունները։

Չը նայած երկարատեւ ջանքերին, Պարսկաստանը մինչեւ 1827 թուականը բաւական յամառություն ունեցաւ դիմադրելու Ռուսաստանի միացման պատմությունը ունի շատ հարուստ գրականություն։ Երկար ու մանրամասն նկարագրել են այդ դէպքը թէ ռուս եւ թէ վրացի հեղինակներ։ Այս քանի օրերը, յօբելեանական տօնախմբությունների առիթով, այդ գրականությունը հարստացաւ մի նոր հետազօտությամբ էլ, որ տպագրված է Պետերբուրգում *) եւ որ, մեր կարծիքով, մի շատ լուրջ քննական տեսություն է, առաջինը իր տեսակի մէջ։

*) „Присоединеніе Грузіи къ Россій“, З. Авалова, 1901.

Այս արտայայտ տեսարանէն խորապէս զգածուած՝ Պ. Մանթաշեան հաչտութիւնը աւելի ամրապնդելու համար երեք «ինտելիկէնտ»-ները կերակուրի կը տանի։

Վարագոյր։

Ինչպէս տեսնում էք, հայկական բարքերը ժամանակակից Բաբելոնում այնքան էլ փայլուն չեն...

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՕՆ

—

«Հայրենական տուն», դրամա Զուդերմանի, 4 գործողութեամբ։

(Շարունակութիւն)

Առաջին երկու գործողութիւնները մի քիչ ձգձգված, ընդարձակված են—մի յատկութիւն, որին Զուդերման շատ քիչ անգամ է միայն հետեւում, որովհետեւ նա բուն դրամատուրգ է եւ աշխատում է զանազանվել վիպասանից իր ոճի կտրուկ եւ ամփոփ արտայայտութեամբ։ Ընդհանրապէս այս դրամայում էլ նա փայլում է իր բեմական արուեստի հմտութեամբ, տեխնիկայի նուրբ հոտառութեամբ, որ աչքի է ընկնում մանաւանդ վերջին գործողութիւնների մէջ, ուր դրամատիքական կատաստրոֆին արդէն արագ յաջորդականութեամբ վրա է հասնում։

Դրամայի ամենահետաքրքրական դէմքերը Մագդան է եւ իր հայրը։ Իրրեւ կանացի բնութիւն՝ Մագդան կրում է իր մէջ անչուշտ մի ուժեղ, բացառիկ գիծ. Նիցշէի վարդապետութեան եւ կանանց ազատագրութեան մթնոլորտումն է նա ծնված։ Բայց նա այս մթնոլորտի տհաս պտուղներից չէ. նա ոչ մակերեսոյթական է եւ ոչ թեթեւսոլիկ։ Ուշադրութեան արժանին այն է, որ Զուդերման Մագդայի անձնաւորութեամբ «զգացմունքի» եւ «բանականութեան» կինը չէ դնում դէմ առ դէմ, ինչպէս այդ սիրում են անել նոր դրամատուրգներից ոմանք, օրինակ, Շարինդբերգ, Հարդլէբէն, մասամբ Հալբէ եւ այլն, որոնք ընդհանրապէս կարծես մաքառում են կանանց ազատագրութեան դէմ։

Այսպէս ուրեմն, Մագդան սովորական կին չէ. բայց ամեն մի բացառիկ կնոջ հոգու խորքերում մրափում է մի բուռն կիրք, որ երբեմն ինչքան անսանձ եւ վայրենի է, նոյնքան էլ բնական է եւ անխարդախ, եւ որի բռնկումը ոչ մի «բարեկրթութեամբ» եւ կօնվէնցիոնէլ ձեւականութեան անհիւթալից կապանքներով չէ կարելի կաշկանդել. կրիտիքական րոպէներին այսպիսի կանանց հոգին շատ յատանին եւ իր նախկին տիրապետութեան իրաւունքների անունով գործելու։ Միայն 1828 թուին վճռվեց երկու պետութիւնների մէջ եղած այդ քաղաքական պայքարը։ Ցայտնի է թէ հայերը 1826—1828 թուականների պատերազմների մէջ որպիսի անձնուրացութեամբ էին ծառայում ռուսներին թէ Ղարաբաղում եւ թէ Երեւանի կողմերում։ Մահմեդական լուծից ազատվելու եւ քրիստոնեայ պետութեան հովանու տակ ապրելու միտքը մի ուժեղ, նուիրական գաղափար էր դարձել, որ այնպիսի վառ գոյներով նկարագրել է այդ դէպքերի ականատես Խաչատուր Աբովեանը։

Այստեղ երեւան է գալիս մի շատ խոշոր հանգամանք, որ ահագին ազդեցութիւն է ունենում հայ ազգի ճակատագրի վրա։ Որոշված են Ռուսաստանի եւ Պարսկաստանի սահմանները. բայց ռուսական սահմաններից դուրս գտնվող հայութիւնն էլ նոյն ձգտումն է ցոյց տալիս դէպի ռուսաց տիրապետութիւնը։ Պարսկաստանից տասնեակ հազարներով հայեր են գաղթում Անդրկովկաս, իսկ երբ պարսկական պատերազմին յաջորդում է ռուս-թիւրքական պատերազմը, նոյն տեսակ շարժում առաջ է գալիս եւ թիւրքահայերի մէջ։

Մինչեւ այդ Օսմանեան Հայաստանը ոչինչ մասնակցութիւն չէր ունեցել այն ազատասիրական շարժման մէջ, որ Իսրայէլ Օրիի ժամանակից տեղի ունէր Հայաստանի արեւելեան պարսկական բաժնում։ Այժմ, պարսկահայերի գաղթականութիւնից յետոյ, երբ ռուսաց զօրքերը մտան օսմանեան հողը, այստեղ էլ պատրաստ էր նոյն ազատասիրական գաղափարը։ Բայազէտի հայերը զէնք են վերցնում, միանում են ռուս զօրքի հետ եւ քաջաբար դիմադրում են թիւրքերին։ Ալաշկերտի եւ Էրզրումի հայերի ռուսասիրութիւնը այնպիսի դրութիւն է ստեղծում նրանց համար, որ նրանք այլ եւս չեն կարողանում մնալ թիւրքիայում եւ ահա մի քանի տասնեակ հազար հայեր էլ այդտեղից են գաղթում Ռուսաստան։

Այստեղից պարզ է թէ, ինչքան ահագին նշանակութիւն ունէր հայերի համար Ռուսաստանի տիրապետութիւնը Անդրկովկասում։ Այդ տիրապետութեան անմիջական թելադրութիւնն է այն, որ թիւրքահայերը զգում են իրանց դրութեան ծանրութիւնը, սկսում են դժգոհ, բողոքաւոր լինել։ 1854—1856 թուականների պատերազմի ժամանակ ռուս օֆիցերները նկատում էին թիւրքահայերի մէջ մոտիկ ապագայի պատկերը. դա այն սառնութիւնն էր, որ գոյանում էր հայերի եւ թիւրքերի մէջ, մի սառնութիւն, որ թշնամական յարաբերութիւն ստեղծելու վրա էր. դեռ այն ժամանակներում գուշակվում էր, որ հայերը կամ կը կոտրվեն թիւրքերի ձեռքով կամ իրանց ազատագրելու դրութիւնը կը բարւոքեն քրիստոնեայ մի պետութեան օգնութեամբ։

Ո՞վ պիտի լինէր այդ պետութիւնը։ Այս հարցը ինքն ըստ ինքեան հասկանալի է, եւ 50-ական թուականներին, բայց բոլորովին պարզվեց 1877—1878 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։ Կան վկայութիւններ, որ դեռ պատերազմից մի քանի տարի առաջ Վանի հայերը կազմեցին մի գաղտնի ընկերակցութիւն, որ պիտի խնդրէր ռուսաց կառավարութիւնից իր հպատակութեան մէջ ընդունել Վասպուրականի հայերին։ Իսկ պատերազմի ժամանակ տեղի ունեցած դէպքերը ամենքին յայտնի են։ Ալաշկերտի ժողովրդի ոգեւորութիւնը այն աստիճան սաստիկ էր, որ երբ ռուսաց զօրքերը ստիպված եղան նահանջել, 3000 ընտանիք հայեր գաղթեցին նրանց հետ Ռուսաստան։ Պատերազմի ժամանակ հայերի կրած տառապանքները այնքան շատ էին, որ Ռուսաստանի պահանջով յատուկ յօդուած մտցրվեց Սան-Ստէֆանօի դաշնագրութեան մէջ։ Երբ այդ յօդուածը դարձաւ Բերլինի 61-րդ յօդուած, դէպքերը յաջորդաբար դասաւորվելով վերջ ի վերջոյ հասցրին թիւրքահայերին 1894—1896 սոսկալի տարիներին։ Այդ ժամանակ էլ արեան գետերի մէջ խեղդվող հայ ազգաբնակութիւնը միայն Ռուսաստան փախչելու մէջ գտաւ մի թշուառ փրկութիւն։

Թիֆլիսում առաջին անգամ ռուսաց տիրապետութիւն հրատարակելու օրից անցել է հարիւր տարի։ Այս առաջին դարում Ռուսաստանը անփոփոխ պահեց միայն պարսկական այն սահմանը, որ որոշված էր 1828 թուին։ Ինչ կը լինի ապագայում։ Համաշխարհային քաղաքականութիւնը արդէն առաջացրել է այնպիսի շահեր, որոնց տեսակէտից Անդրկովկասը մի առանձին կարեւորութիւն է ստանում Ռուսաստանի համար։ Հիւսիսային վիթխարի պետութիւնը իրերի բնական ընթացքով ձգտում է դէպի հարաւային ծովերը, դէպի Պարսից ծոցը։ Բացի դրանից ասիական Թիւրքիան է մնում այն ճանապարհը, որ պիտի տանէ դէպի Բոսֆորի եւ Միջերկրականի ափերը. իսկ այդտեղ տարէցտարի բարդվում եւ ընդհարվում են եւրոպական պետութիւնների շահերը։ Մի ժամանակ կար, երբ Հայաստանի բարձրաւանդակին տիրելը սպառնում էր միայն Անգլիայի շահերին, որովհետեւ այդտեղից հեշտ է Հնդկաստանի ճանապարհի վրա էլ տիրել։ Այժմ Միջագետքի մէջ քաղաքական շահեր է ձեռք բերել եւ այնպիսի հզօր պետութիւն, ինչպէս է Գերմանիան։

Կարող են արդեօք այդ հակառակ շահերը կանգնեցնել Ռուսաստանի առաջացումը դէպի ծովերը։ Սա ապագայի հարց է. բայց եւ այնպէս, չէ կարելի ասել թէ Անդրկովկասի այժմեան սահմանների մէջ ամփոփված Ռուսաստանը այլ եւս կատարելու դեր չունի իրրեւ առաջխաղացող մի հակայ ոյժ։ Ուրեմն, Ռուսաստանը ապագայում էլ հզօր ազդեցութիւն պիտի գործէ հայութեան այն մասի ճակատագրի վրա, որ այժմ նրա սահմաններից դուրս է ապրում։

Այդ ազդեցութիւնը սկսվել է XVIII դարի սկզբից։ Մի դարից յետոյ հայութեան մի մեծ մասը մտաւ նրա տիրապետութեան տակ։ Այժմ սկսվում է երրորդ դարը եւ դեռ հայ ազգը ունի մի այլ մաս, որ դեռ հպատակ է մահմեդական իշխանութեան, այն սարսափելի լուծին, որ դարերից ի վեր հարկադրում էր հային ազատվելու միջոց աղերսել։ Ինչ է ասում այս երրորդ դարը։ Դժուար է մարգարէանալ, բայց մինչեւ այժմ եղածը թոյլ է տալիս ենթադրութիւններ անել, հաւանական եզրակացութիւնների գալ։ Այդ եզրակացութիւնն այն է, որ մնացած հայութեան համար էլ Ռուսաստանը դեռ կատարելիք մեծ դեր ունի։

Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Առաջաւոր Ասիան դեռ եւս մահմեդական տիրապետութեան տակ է. այդտեղ խաւար, ասիական բարբարոսութեան չղթաներում տանջվում են շատ ազգեր։ Մահմեդականութիւնը չէ առաջադիմում, հետեւաբար չէ կարելի սպասել թէ նա բարեկարգ, քաղաքակիրթ երկրի դրութիւն կը ստեղծէ այն լայնատարած աշխարհում, որ տարածվում է Միջերկրական ծովից դէպի Աւղանիստան եւ Հնդկաստան։ Եւ ահա այդ դժբախտ աշխարհի մի համեմատաբար փոքրիկ կտորը—Անդրկովկասը մնում է քրիստոնեայ պետութեան հովանու տակ, հարիւր տարվայ ընթացքում այնքան բարեկարգվում է, այնքան առաջադիմում է բարոյապէս եւ նիւթապէս, որ կարող է իր հարեւան դժբախտ երկիրների նախանձը միայն գրգռել։ Որքան էլ ծանր ու անմաչ երեւայ մահմեդականութեան լուծը, որքան եւ անյատակ ու ամեն կողմից լաւ պաշտպանված համարվի այն դժոխքը, որի մէջ այժմ տառապում են բազմաթիւ ժանր ազգութիւններ Փոքր Ասիայում, այնու ամենայնիւ, մարդկային բնութեան յատուկ է յոյս ու ակնկալութիւն ունենալ, սպասել ազատութեան առաւօտին եւ ամբողջ սրտով ցանկալ, որ շուտ բացվի այդ առաւօտը։

Իսկ այդ տառապող ազգութիւնների շուրջը չը կայ մի այլ հզօր պետութիւն, բացի Ռուսաստանից։

Հարիւր տարի է, ինչ նա հաստատվել է Անդրկովկասում։ Այստեղ երկար ժամանակ նա հարկադրված էր դեռ ներքին գործերը կարգադրել, հպատակեցնել Կովկասեան ապստամբարերը։ Վերջացել է Կովկասի նուաճման գործը։ Այժմ մնում են այն լայն ու հեռաւոր հորիզոնները, որոնք Կովկասի լեռներից բացված են դէպի արեւելք, արեւմուտք եւ հարաւ։

Լ.

Այս արտայայտ տեսարանէն խորապէս զգածուած՝ Պ. Մանթաշեան հաչտութիւնը աւելի ամրապնդելու համար երեք «ինտելիկէնտ»-ները կերակուրի կը տանի։

Վարագոյր։

Ինչպէս տեսնում էք, հայկական բարքերը ժամանակակից Բաբելոնում այնքան էլ փայլուն չեն...

ՀԱՑՈՑ ԹԱՏՐՕՆ

—

«Հայրենական տուն», դրամա Զուդերմանի, 4 գործողութեամբ։

(Շարունակութիւն)

Առաջին երկու գործողութիւնները մի քիչ ձգձգված, ընդարձակված են—մի յատկութիւն, որին Զուդերման շատ քիչ անգամ է միայն հետեւում, որովհետեւ նա բուն դրամատուրգ է եւ աշխատում է զանազանվել վիպասանից իր ոճի կտրուկ եւ ամփոփ արտայայտութեամբ։ Ընդհանրապէս այս դրամայում էլ նա փայլում է իր բեմական արուեստի հմտութեամբ, տեխնիկայի նուրբ հոտառութեամբ, որ աչքի է ընկնում մանաւանդ վերջին գործողութիւնների մէջ, ուր դրամատիքական կատաստրոֆին արդէն արագ յաջորդականութեամբ վրա է հասնում։

Դրամայի ամենահետաքրքրական դէմքերը Մագդան է եւ իր հայրը։ Իրրեւ կանացի բնութիւն՝ Մագդան կրում է իր մէջ անչուշտ մի ուժեղ, բացառիկ գիծ. Նիցշէի վարդապետութեան եւ կանանց ազատագրութեան մթնոլորտումն է նա ծնված։ Բայց նա այս մթնոլորտի տհաս պտուղներից չէ. նա ոչ մակերեսոյթական է եւ ոչ թեթեւսոլիկ։ Ուշադրութեան արժանին այն է, որ Զուդերման Մագդայի անձնաւորութեամբ «զգացմունքի» եւ «բանականութեան» կինը չէ դնում դէմ առ դէմ, ինչպէս այդ սիրում են անել նոր դրամատուրգներից ոմանք, օրինակ, Շարինդբերգ, Հարդլէբէն, մասամբ Հալբէ եւ այլն, որոնք ընդհանրապէս կարծես մաքառում են կանանց ազատագրութեան դէմ։

Այսպէս ուրեմն, Մագդան սովորական կին չէ. բայց ամեն մի բացառիկ կնոջ հոգու խորքերում մրափում է մի բուռն կիրք, որ երբեմն ինչքան անսանձ եւ վայրենի է, նոյնքան էլ բնական է եւ անխարդախ, եւ որի բռնկումը ոչ մի «բարեկրթութեամբ» եւ կօնվէնցիոնէլ ձեւականութեան անհիւթալից կապանքներով չէ կարելի կաշկանդել. կրիտիքական րոպէներին այսպիսի կանանց հոգին շատ յատանին եւ իր նախկին տիրապետութեան իրաւունքների անունով գործելու։ Միայն 1828 թուին վճռվեց երկու պետութիւնների մէջ եղած այդ քաղաքական պայքարը։ Ցայտնի է թէ հայերը 1826—1828 թուականների պատերազմների մէջ որպիսի անձնուրացութեամբ էին ծառայում ռուսներին թէ Ղարաբաղում եւ թէ Երեւանի կողմերում։ Մահմեդական լուծից ազատվելու եւ քրիստոնեայ պետութեան հովանու տակ ապրելու միտքը մի ուժեղ, նուիրական գաղափար էր դարձել, որ այնպիսի վառ գոյներով նկարագրել է այդ դէպքերի ականատես Խաչատուր Աբովեանը։

Այստեղ երեւան է գալիս մի շատ խոշոր հանգամանք, որ ահագին ազդեցութիւն է ունենում հայ ազգի ճակատագրի վրա։ Որոշված են Ռուսաստանի եւ Պարսկաստանի սահմանները. բայց ռուսական սահմաններից դուրս գտնվող հայութիւնն էլ նոյն ձգտումն է ցոյց տալիս դէպի ռուսաց տիրապետութիւնը։ Պարսկաստանից տասնեակ հազարներով հայեր են գաղթում Անդրկովկաս, իսկ երբ պարսկական պատերազմին յաջորդում է ռուս-թիւրքական պատերազմը, նոյն տեսակ շարժում առաջ է գալիս եւ թիւրքահայերի մէջ։

Մինչեւ այդ Օսմանեան Հայաստանը ոչինչ մասնակցութիւն չէր ունեցել այն ազատասիրական շարժման մէջ, որ Իսրայէլ Օրիի ժամանակից տեղի ունէր Հայաստանի արեւելեան պարսկական բաժնում։ Այժմ, պարսկահայերի գաղթականութիւնից յետոյ, երբ ռուսաց զօրքերը մտան օսմանեան հողը, այստեղ էլ պատրաստ էր նոյն ազատասիրական գաղափարը։ Բայազէտի հայերը զէնք են վերցնում, միանում են ռուս զօրքի հետ եւ քաջաբար դիմադրում են թիւրքերին։ Ալաշկերտի եւ Էրզրումի հայերի ռուսասիրութիւնը այնպիսի դրութիւն է ստեղծում նրանց համար, որ նրանք այլ եւս չեն կարողանում մնալ թիւրքիայում եւ ահա մի քանի տասնեակ հազար հայեր էլ այդտեղից են գաղթում Ռուսաստան։

Այստեղից պարզ է թէ, ինչքան ահագին նշանակութիւն ունէր հայերի համար Ռուսաստանի տիրապետութիւնը Անդրկովկասում։ Այդ տիրապետութեան անմիջական թելադրութիւնն է այն, որ թիւրքահայերը զգում են իրանց դրութեան ծանրութիւնը, սկսում են դժգոհ, բողոքաւոր լինել։ 1854—1856 թուականների պատերազմի ժամանակ ռուս օֆիցերները նկատում էին թիւրքահայերի մէջ մոտիկ ապագայի պատկերը. դա այն սառնութիւնն էր, որ գոյանում էր հայերի եւ թիւրքերի մէջ, մի սառնութիւն, որ թշնամական յարաբերութիւն ստեղծելու վրա էր. դեռ այն ժամանակներում գուշակվում էր, որ հայերը կամ կը կոտրվեն թիւրքերի ձեռքով կամ իրանց ազատագրելու դրութիւնը կը բարւոքեն քրիստոնեայ մի պետութեան օգնութեամբ։

Ո՞վ պիտի լինէր այդ պետութիւնը։ Այս հարցը ինքն ըստ ինքեան հասկանալի է, եւ 50-ական թուականներին, բայց բոլորովին պարզվեց 1877—1878 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։ Կան վկայութիւններ, որ դեռ պատերազմից մի քանի տարի առաջ Վանի հայերը կազմեցին մի գաղտնի ընկերակցութիւն, որ պիտի խնդրէր ռուսաց կառավարութիւնից իր հպատակութեան մէջ ընդունել Վասպուրականի հայերին։ Իսկ պատերազմի ժամանակ տեղի ունեցած դէպքերը ամենքին յայտնի են։ Ալաշկերտի ժողովրդի ոգեւորութիւնը այն աստիճան սաստիկ էր, որ երբ ռուսաց զօրքերը ստիպված եղան նահանջել, 3000 ընտանիք հայեր գաղթեցին նրանց հետ Ռուսաստան։ Պատերազմի ժամանակ հայերի կրած տառապանքները այնքան շատ էին, որ Ռուսաստանի պահանջով յատուկ յօդուած մտցրվեց Սան-Ստէֆանօի դաշնագրութեան մէջ։ Երբ այդ յօդուածը դարձաւ Բերլինի 61-րդ յօդուած, դէպքերը յաջորդաբար դասաւորվելով վերջ ի վերջոյ հասցրին թիւրքահայերին 1894—1896 սոսկալի տարիներին։ Այդ ժամանակ էլ արեան գետերի մէջ խեղդվող հայ ազգաբնակութիւնը միայն Ռուսաստան փախչելու մէջ գտաւ մի թշուառ փրկութիւն։

Թիֆլիսում առաջին անգամ ռուսաց տիրապետութիւն հրատարակելու օրից անցել է հարիւր տարի։ Այս առաջին դարում Ռուսաստանը անփոփոխ պահեց միայն պարսկական այն սահմանը, որ որոշված էր 1828 թուին։ Ինչ կը լինի ապագայում։ Համաշխարհային քաղաքականութիւնը արդէն առաջացրել է այնպիսի շահեր, որոնց տեսակէտից Անդրկովկասը մի առանձին կարեւորութիւն է ստանում Ռուսաստանի համար։ Հիւսիսային վիթխարի պետութիւնը իրերի բնական ընթացքով ձգտում է դէպի հարաւային ծովերը, դէպի Պարսից ծոցը։ Բացի դրանից ասիական Թիւրքիան է մնում այն ճանապարհը, որ պիտի տանէ դէպի Բոսֆորի եւ Միջերկրականի ափերը. իսկ այդտեղ տարէցտարի բարդվում եւ ընդհարվում են եւրոպական պետութիւնների շահերը։ Մի ժամանակ կար, երբ Հայաստանի բարձրաւանդակին տիրելը սպառնում էր միայն Անգլիայի շահերին, որովհետեւ այդտեղից հեշտ է Հնդկաստանի ճանապարհի վրա էլ տիրել։ Այժմ Միջագետքի մէջ քաղաքական շահեր է ձեռք բերել եւ այնպիսի հզօր պետութիւն, ինչպէս է Գերմանիան։

Կարող են արդեօք այդ հակառակ շահերը կանգնեցնել Ռուսաստանի առաջացումը դէպի ծովերը։ Սա ապագայի հարց է. բայց եւ այնպէս, չէ կարելի ասել թէ Անդրկովկասի այժմեան սահմանների մէջ ամփոփված Ռուսաստանը այլ եւս կատարելու դեր չունի իրրեւ առաջխաղացող մի հակայ ոյժ։ Ուրեմն, Ռուսաստանը ապագայում էլ հզօր ազդեցութիւն պիտի գործէ հայութեան այն մասի ճակատագրի վրա, որ այժմ նրա սահմաններից դուրս է ապրում։

Այդ ազդեցութիւնը սկսվել է XVIII դարի սկզբից։ Մի դարից յետոյ հայութեան մի մեծ մասը մտաւ նրա տիրապետութեան տակ։ Այժմ սկսվում է երրորդ դարը եւ դեռ հայ ազգը ունի մի այլ մաս, որ դեռ հպատակ է մահմեդական իշխանութեան, այն սարսափելի լուծին, որ դարերից ի վեր հարկադրում էր հային ազատվելու միջոց աղերսել։ Ինչ է ասում այս երրորդ դարը։ Դժուար է մարգարէանալ, բայց մինչեւ այժմ եղածը թոյլ է տալիս ենթադրութիւններ անել, հաւանական եզրակացութիւնների գալ։ Այդ եզրակացութիւնն այն է, որ մնացած հայութեան համար էլ Ռուսաստանը դեռ կատարելիք մեծ դեր ունի։

Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Առաջաւոր Ասիան դեռ եւս մահմեդական տիրապետութեան տակ է. այդտեղ խաւար, ասիական բարբարոսութեան չղթաներում տանջվում են շատ ազգեր։ Մահմեդականութիւնը չէ առաջադիմում, հետեւաբար չէ կարելի սպասել թէ նա բարեկարգ, քաղաքակիրթ երկրի դրութիւն կը ստեղծէ այն լայնատարած աշխարհում, որ տարածվում է Միջերկրական ծովից դէպի Աւղանիստան եւ Հնդկաստան։ Եւ ահա այդ դժբախտ աշխարհի մի համեմատաբար փոքրիկ կտորը—Անդրկովկասը մնում է քրիստոնեայ պետութեան հովանու տակ, հարիւր տարվայ ընթացքում այնքան բարեկարգվում է, այնքան առաջադիմում է բարոյապէս եւ նիւթապէս, որ կարող է իր հարեւան դժբախտ երկիրների նախանձը միայն գրգռել։ Որքան էլ ծանր ու անմաչ երեւայ մահմեդականութեան լուծը, որքան եւ անյատակ ու ամեն կողմից լաւ պաշտպանված համարվի այն դժոխքը, որի մէջ այժմ տառապում են բազմաթիւ ժանր ազգութիւններ Փոքր Ասիայում, այնու ամենայնիւ, մարդկային բնութեան յատուկ է յոյս ու ակնկալութիւն ունենալ, սպասել ազատութեան առաւօտին եւ ամբողջ սրտով ցանկալ, որ շուտ բացվի այդ առաւօտը։

Իսկ այդ տառապող ազգութիւնների շուրջը չը կայ մի այլ հզօր պետութիւն, բացի Ռուսաստանից։

Հարիւր տարի է, ինչ նա հաստատվել է Անդրկովկասում։ Այստեղ երկար ժամանակ նա հարկադրված էր դեռ ներքին գործերը կարգադրել, հպատակեցնել Կովկասեան ապստամբարերը։ Վերջացել է Կովկասի նուաճման գործը։ Այժմ մնում են այն լայն ու հեռաւոր հորիզոնները, որոնք Կովկասի լեռներից բացված են դէպի արեւելք, արեւմուտք եւ հարաւ։

Լ.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 19-ին

Արդէն յայտնի է ձեզ, որ նահանգական իշխանութիւնը անհնարին համարեց հաստատել քաղաքագլխի պաշտօնի համար մեր ընտրած պ. Գ. Շահնազարեանցին։

Ապարդիւն անցաւ մեր աշխատանքը, ի դերեւ ելան մեր ակնկալութիւնները։ Դարձեալ թափուր մնաց տեղը, դարձեալ առանց գլխի մնաց քաղաքը։ Նոյն իշխանութեան առաջարկութեամբ երէկ, ամսոյս 18-ին, քաղաքային ձայնաւորները ժողովվեցին դումայի դահլիճը նոր ընտրութիւն անելու։

տանին եւ իր նախկին տիրապետութեան իրաւունքների անունով գործելու։ Միայն 1828 թուին վճռվեց երկու պետութիւնների մէջ եղած այդ քաղաքական պայքարը։ Ցայտնի է թէ հայերը 1826—1828 թուականների պատերազմների մէջ որպիսի անձնուրացութեամբ էին ծառայում ռուսներին թէ Ղարաբաղում եւ թէ Երեւանի կողմերում։ Մահմեդական լուծից ազատվելու եւ քրիստոնեայ պետութեան հովանու տակ ապրելու միտքը մի ուժեղ, նուիրական գաղափար էր դարձել, որ այնպիսի վառ գոյներով նկարագրել է այդ դէպքերի ականատես Խաչատուր Աբովեանը։

Այստեղ երեւան է գալիս մի շատ խոշոր հանգամանք, որ ահագին ազդեցութիւն է ունենում հայ ազգի ճակատագրի վրա։ Որոշված են Ռուսաստանի եւ Պարսկաստանի սահմանները. բայց ռուսական սահմաններից դուրս գտնվող հայութիւնն էլ նոյն ձգտումն է ցոյց տալիս դէպի ռուսաց տիրապետութիւնը։ Պարսկաստանից տասնեակ հազարներով հայեր են գաղթում Անդրկովկաս, իսկ երբ պարսկական պատերազմին յաջորդում է ռուս-թիւրքական պատերազմը, նոյն տեսակ շարժում առաջ է գալիս եւ թիւրքահայերի մէջ։

Մինչեւ այդ Օսմանեան Հայաստանը ոչինչ մասնակցութիւն չէր ունեցել այն ազատասիրական շարժման մէջ, որ Իսրայէլ Օրիի ժամանակից տեղի ունէր Հայաստանի արեւելեան պարսկական բաժնում։ Այժմ, պարսկահայերի գաղթականութիւնից յետոյ, երբ ռուսաց զօրքերը մտան օսմանեան հողը, այստեղ էլ պատրաստ էր նոյն ազատասիրական գաղափարը։ Բայազէտի հայերը զէնք են վերցնում, միանում են ռուս զօրքի հետ եւ քաջաբար դիմադրում են թիւրքերին։ Ալաշկերտի եւ Էրզրումի հայերի ռուսասիրութիւնը այնպիսի դրութիւն է ստեղծում նրանց համար, որ նրանք այլ եւս չեն կարողանում մնալ թիւրքիայում եւ ահա մի քանի տասնեակ հազար հայեր էլ այդտեղից են գաղթում Ռուսաստան։

Այստեղից պարզ է թէ, ինչքան ահագին նշանակութիւն ունէր հայերի համար Ռուսաստանի տիրապետութիւնը Անդրկովկասում։ Այդ տիրապետութեան անմիջական թելադրութիւնն է այն, որ թիւրքահայերը զգում են իրանց դրութեան ծանրութիւնը, սկսում են դժգոհ, բողոքաւոր լինել։ 1854—1856 թուականների պատերազմի ժամանակ ռուս օֆիցերները նկատում էին թիւրքահայերի մէջ մոտիկ ապագայի պատկերը. դա այն սառնութիւնն էր, որ գոյանում էր հայերի եւ թիւրքերի մէջ, մի սառնութիւն, որ թշնամական յարաբերութիւն ստեղծելու վրա էր. դեռ այն ժամանակներում գուշակվում էր, որ հայերը կամ կը կոտրվեն թիւրքերի ձեռքով կամ իրանց ազատագրելու դրութիւնը կը բարւոքեն քրիստոնեայ մի պետութեան օգնութեամբ։

Ո՞վ պիտի լինէր այդ պետութիւնը։ Այս հարցը ինքն ըստ ինքեան հասկանալի է, եւ 50-ական թուականներին, բայց բոլորովին պարզվեց 1877—1878 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։ Կան վկայութիւններ, որ դեռ պատերազմից մի քանի տարի առաջ Վանի հայերը կազմեցին մի գաղտնի ընկերակցութիւն, որ պիտի խնդրէր ռուսաց կառավարութիւնից իր հպատակութեան մէջ ընդունել Վասպուրականի հայերին։ Իսկ պատերազմի ժամանակ տեղի ունեցած դէպքերը ամենքին յայտնի են։ Ալաշկերտի ժողովրդի ոգեւորութիւնը այն աստիճան սաստիկ էր, որ երբ ռուսաց զօրքերը ստիպված եղան նահանջել, 3000 ընտանիք հայեր գաղթեցին նրանց հետ Ռուսաստան։ Պատերազմի ժամանակ հայերի կրած տառապանքները այնքան շատ էին, որ Ռուսաստանի պահանջով յատուկ յօդուած մտցրվեց Սան-Ստէֆանօի դաշնագրութեան մէջ։ Երբ այդ յօդուածը դարձաւ Բերլինի 61-րդ յօդուած, դէպքերը յաջորդաբար դասաւորվելով վերջ ի վերջոյ հասցրին թիւրքահայերին 1894—1896 սոսկալի տարիներին։ Այդ ժամանակ էլ արեան գետերի մէջ խեղդվող հայ ազգաբնակութիւնը միայն Ռուսաստան փախչելու մէջ գտաւ մի թշուառ փրկութիւն։

Թիֆլիսում առաջին անգամ ռուսաց տիրապետութիւն հրատարակելու օրից անցել է հարիւր տարի։ Այս առաջին դարում Ռուսաստանը անփոփոխ պահեց միայն պարսկական այն սահմանը, որ որոշված էր 1828 թուին։ Ինչ կը լինի ապագայում։ Համաշխարհային քաղաքականութիւնը արդէն առաջացրել է այնպիսի շահեր, որոնց տեսակէտից Անդրկովկասը մի առանձին կարեւորութիւն է ստանում Ռուսաստանի համար։ Հիւսիսային վիթխարի պետութիւնը իրերի բնական ընթացքով ձգտում է դէպի հարաւային ծովերը, դէպի Պարսից ծոցը։ Բացի դրանից ասիական Թիւրքիան է մնում այն ճանապարհը, որ պիտի տանէ դէպի Բոսֆորի եւ Միջերկրականի ափերը. իսկ այդտեղ տարէցտարի բարդվում եւ ընդհարվում են եւրոպական պետութիւնների շահերը։ Մի ժամանակ կար, երբ Հայաստանի բարձրաւանդակին տիրելը սպառնում էր միայն Անգլիայի շահերին, որովհետեւ այդտեղից հեշտ է Հնդկաստանի ճանապարհի վրա էլ տիրել։ Այժմ Միջագետքի մէջ քաղաքական շահեր է ձեռք բերել եւ այնպիսի հզօր պետութիւն, ինչպէս է Գերմանիան։

Կարող են արդեօք այդ հակառակ շահերը կանգնեցնել Ռուսաստանի առաջացումը դէպի ծովերը։ Սա ապագայի հարց է. բայց եւ այնպէս, չէ կարելի ասել թէ Անդրկովկասի այժմեան սահմանների մէջ ամփոփված Ռուսաստանը այլ եւս կատարելու դեր չունի իրրեւ առաջխաղացող մի հակայ ոյժ։ Ուրեմն, Ռուսաստանը ապագայում էլ հզօր ազդեցութիւն պիտի գործէ հայութեան այն մասի ճակատագրի վրա, որ այժմ նրա սահմաններից դուրս է ապրում։

Այդ ազդեցութիւնը սկսվել է XVIII դարի սկզբից։ Մի դարից յետոյ հայութեան մի մեծ մասը մտաւ նրա տիրապետութեան տակ։ Այժմ սկսվում է երրորդ դարը եւ դեռ հայ ազգը ունի մի այլ մաս, որ դեռ հպատակ է մահմեդական իշխանութեան, այն սարսափելի լուծին, որ դարերից ի վեր հարկադրում էր հային ազատվելու միջոց աղերսել։ Ինչ է ասում այս երրորդ դարը։ Դժուար է մարգարէանալ, բայց մինչեւ այժմ եղածը թոյլ է տալիս ենթադրութիւններ անել, հաւանական եզրակացութիւնների գալ։ Այդ եզրակացութիւնն այն է, որ մնացած հայութեան համար էլ Ռուսաստանը դեռ կատարելիք մեծ դեր ունի։

Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Առաջաւոր Ասիան դեռ եւս մահմեդական տիրապետութեան տակ է. այդտեղ խաւար, ասիական բարբարոսութեան չղթաներում տանջվում են շատ ազգեր։ Մահմեդականութիւնը չէ առաջադիմում, հետեւաբար չէ կարելի սպասել թէ նա բարեկարգ, քաղաքակիրթ երկրի դրութիւն կը ստեղծէ այն լայնատարած աշխարհում, որ տարածվում է Միջերկրական ծովից դէպի Աւղանիստան եւ Հնդկաստան։ Եւ ահա այդ դժբախտ աշխարհի մի համեմատաբար փոքրիկ կտորը—Անդրկովկասը մնում է քրիստոնեայ պետութեան հովանու տակ, հարիւր տարվայ ընթացքում այնքան բարեկարգվում է, այնքան առաջադիմում է բարոյապէս եւ նիւթապէս, որ կարող է իր հարեւան դժբախտ երկիրների նախանձը միայն գրգռել։ Որքան էլ ծանր ու անմաչ երեւայ մահմեդականութեան լուծը, որքան եւ անյատակ ու ամեն կողմից լաւ պաշտպանված համարվի այն դժոխքը, որի մէջ այժմ տառապում են բազմաթիւ ժանր ազգութիւններ Փոքր Ասիայում, այնու ամենայնիւ, մարդկային բնութեան յատուկ է յոյս ու ակնկալութիւն ունենալ, սպասել ազատութեան առաւօտին եւ ամբողջ սրտով ցանկալ, որ շուտ բացվի այդ առաւօտը։

Իսկ այդ տառապող ազգութիւնների շուրջը չը կայ մի այլ հզօր պետութիւն, բացի Ռուսաստանից։

Հարիւր տարի է, ինչ նա հաստատվել է Անդրկովկասում։ Այստեղ երկար ժամանակ նա հարկադրված էր դեռ ներքին գործերը կարգադրել, հպատակեցնել Կովկասեան ապստամբարերը։ Վերջացել է Կովկասի նուաճման գործը։ Այժմ մնում են այն լայն ու հեռաւոր հորիզոնները, որոնք Կովկասի լեռներից բացված են դէպի արեւելք, արեւմուտք եւ հարաւ։

Լ.

8—9 ամիս մարդ որոնելուց, ընտրութիւններ սարքելուց եւ ոչ մի ցանկալի հետեւանքի չը հասնելուց յոգնած, գրեթէ յուսահատված, մենք չը գիտէինք ինչ անել, ում ընտրել այս անգամ։ Քիչ էր մնացել, որ դիմէինք պ. Նահանգապետին եւ խնդրէինք, որ նա ինքը նըշանակէ իր բարեհայեցողութեամբ Շուշու համար նոր քաղաքագլուխ։ Բայց հնազանդվելով իշխանութեան կամքին՝ ձայնաւորները աւելորդ չը համարեցին մի վերջին փորձ անել։

Այսպէս՝ երէկ ձեռնարկվեց երրորդ ընտրութեան։

Մեզ թւում էր, որ քաղաքագլխի պաշտօնի համար թեկնածու այլ եւս չը պիտի ունենանք, որովհետեւ փոքր ի շատէ արժանաւոր անձինք հէնց այն գլխից, չանսալով մեր դիմումներին, մեր խնդիրքներին, հրաժարվել էին եւ կարել մեր յոյսը։

Բայց այս անգամ գործը ուրիշ կերպարանք ընդունեց։ Առաջինը ցանկութիւն յայտնեց իր տուփը գնելու Գ. Քալանթարեան (անդամ քաղաքային վարչութեան), երկրորդը՝ Զաւադրէկ Սաֆարալիբէկով (դարձեալ վարչութեան անդամ), երրորդը՝ Գ. Գրիգորեան, չորրորդը՝ յատերի խնդիրքին զիջանելով, Ջ. Իշխանեան։

Քուէարկութիւնը դեռ չը սկսած՝ Գ. Գրիգորեան յետ վերցրեց իր տուփը. մնացին երեք թեկնածուներ։ Գաղտնի քուէարկութեամբ ստացան հետեւեալ ձայները. Ջ. Իշխանեան 23 սպիտակ 6 սեւ, Ջ. Սաֆարալիբէկով 18 սպիտակ 11 սեւ, Գ. Քալանթարեան 11 սպիտակ 18 սեւ։

Ձայների բազմութեան նայած՝ գաղաքագլխի պաշտօնի համար ընտրված է, հետեւապէս, Ջ. Իշխանեան։ Բայց որովհետեւ Ջ. Սաֆարալիբէկով էլ քուէարկող իրաւասուների ընդհանուր թւի կէսից աւելի ձայն ունի ստացած, ուստի եւ քաղաքային վարչութիւնը երկուսին կառաջարկէ պ. Նահանգապետին։ Կը հաստատէ նա քաղաքագլուխ Ջ. Իշխանեանին, թէ այլ անօրէնութիւն կանէ, այդ մենք կը տեսնենք մօտիկ ապագայում։

Մի եւ նոյն նիստում կարդացվեց դումայի արժանաւորագոյն ձայնաւորներից մէկի՝ բժիշկ Ն. Եարամիշեանի յայտարարութիւնը, որով նա իբր թէ քայքայված առողջութեան եւ տնային հանգամանքների պատճառով խնդրում է հրաժարված համարել իր պաշտօնից։ Նրա տեղ նշանակվեց հերթական Հաշիմ-բէկ Վիզիրով։ Ցուսով ենք, որ պ. Եարամիշեանցի տուած յատերին խռովեցնող օրինակը վարակիչ չի լինի առանց այն էլ մեր սակաւաթիւ արժանաւոր ձայնաւորների համար։

Սերմացան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, սեպտեմբերի 25-ին, Կովկասեան ցուցահանդէսն այցելեցին Թիֆլիս եկած Օգոստափառ Հիւրերը՝ Նորին մեծութիւն յունական թագուհի Օլգա Կոնստանտինովնա, Կովկասեան նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ, Մեծ Իշխան Գէօրգիյ Միխայլովիչ իր Օգոստափառ Աժուսնոյ՝ Մարիա Գէօրգիեվնայի հետ, Մեծ Իշխանուհի Ելենա Վլադիմիրովնա եւ յունական արքայորդիներ Անդրէյ եւ Քրիստոֆոր։ Ցուցահանդէսի մուտքի առաջ Օգոստափառ Հիւրերին սպասում էին ցուցահանդէսի կոմիսարը զանազան բաժինների կարգադրիչների հետ միասին։ Ուղիղ ժամի 3½-ին Օգոստափառ հիւրերը մուտք գործեցին ցուցահանդէսի շինութեան մէջ եւ սկսեցին ծանօթանալ հանդէս բերված առարկաների հետ։ Ցուցահանդէսի կոմիսարը առաջնորդում էր Հիւրերին, իսկ բաժինների կարգադրիչները տալիս էին մանրամասն բացատրութիւններ։ Օգոստափառ Հիւրերի առանձնապէս յատուկ ուշադրութիւնը գրաւեցին ցուցահանդէսում տեղի ունեցող զանազան տեխնիկական գործողութիւններ եւ կարկտաբեր ամպերը ցրվելու համար թնդանօթների պայթիւնները։ Ժամի 5-ին Օգոստափառ Հիւրերն աւարտեցին ցուցահանդէսի ուսումնասիրութիւնը եւ վերադարձան պալատ։

—

Երկուշաբթի, Թիֆլիսի երկաթուղու կայարանի արքայական սենեակներում, Օգոստափառ Անձերին դիմաւորելու ժամանակ, Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխան Մելիքով, դիմելով Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին, արտասանեց հետեւեալ ճառը. «Անսահման եւ խորին յուզման զգացմունքով ազնուականութեան կողմից ողջունում եմ Ձերդ Կայսերական Բարձրութիւնը,—Թագաւոր Կայսրի Բարձր Ներկայացուցչին առաջիկայ տօնախմբութիւնների ժամանակ, որոնք պէտք է տեղի ունենան վրաց Թագաւորութեան Ռուսաստանի հետ ազատակամ միանալու հարիւրամեայ յոբելեանի առիթով։ Հարիւր տարի առաջ, թշնամիներից նեղված, իրանց գլուխ ունենալով Թագաւորին, մեր պապերը, ապա եւ ազգաբնակութիւնը յանձնեցին իրանց հայրենիքի եւ իրանց բախտը Ռուսաց երկրի Ինքնակալ Տիրապետողների ձեռքը։ Հարիւր տարի առաջ, Պաւէլ Պետրովիչ Կայսրի Ամենողորմած հրովարտակից յետոյ, հնչեցին Ամենողորմած Թագաւոր Կայսր Ալէքսանդր Օրհնեալի սրբազան խօսքերը, որ յանձն առաւ Վրաց Թագաւորութեան կառավարութեան լուծը ոչ ոյժերի աւելացման, ոչ շահի համար, այլ ի սէր մարդկայնութեան, կամենալով ազատել տառապեալների վշտերը։ Վրաց ժողովրդի աղաչանքը համոզեց Աստուծոյ Թագակիր Օծեալին չը թողնելու, որ զոհ գնայ հաւատակից ազգը, որ իր բաղդը յանձնել էր Ռուսաստանի մեծահոգի պաշտպանութեանը։ Հնազանդ իր Ինքնակալի կամքին, ռուսաց մեծ ազգը, իր գլուխ ունենալով քաջարի ազնուականութիւնը, ցոյց տուեց մեծահոգութեան, անձնուրացութեան եւ քաջութեան անթիւ եւ անհամար օրինակներ, որոնք փառք եւ հիացմունք վաստակեցին նրա համար Ռուսաց երկրի սահմաններից դուրս եւ ընդհանուր սէր մեր բազմաչեզոք եւ բազմացեղ ընդհանուր հայրենիքի մէջ։ Անփոփոխ են վրաց ազգաբնակութեան եւ ազնուականութեան դարաւոր սուրբ, եղբայրական սիրոյ զգացմունքները։ Ազատակամօրէն միանալով, լայն բաց անելով Դարիալի կիրճի դռները ռուսաց հզօր ժողովրդի յաղթական, անդիմադրելի գնացքի առաջ դէպի Ասիայի խորքերը, հին իվերիական երկրի, Աստուածամօր սրբազան վիճակի, բարձր դասակարգը եւ ազգաբնակութիւնը, հարիւր տարվայ ընթացքում տեսել է միշտ իր հայրենիքի ամբողջ բարեկեցութիւնը եւ երջանկութիւնը անքակտելի միացման մէջ ռուսաց ժողովրդի եւ ազնուականութեան հետ։ Կովկասեան հերոսական պատերազմներում, «ռուսաց զինուորութեան հետ՝ երրեակ միութեան սուրբ Հաւատի, Թագաւորի եւ Հայրենիքի համար», նրանք իրանց արիւնով կնքեցին իրանց զգացմունքների սրբութիւնը եւ ամրապնդեցին նոյնը Ալանդուզի, Բաշ-Քեսադիկլեաի, Ալվարի եւ Կարսի հերոսների մեզ համար նուիրական եղբայրական գերեզմաններում։ Ձերդ Կայսերական Բարձրութեան, որպէս Կովկասի նախկին Օգոստափառ Փոխարքային, յայտնի են ի հնուստ արքայատէր Վրաստանի եւ Կովկասի ամբողջ ազգաբնակութեան հաւատարիմ հպատակութեան ակնածու զգացմունքները դէպի ռուսաց երկրի Ինքնակալ Տիրապետների գահը։ Ձեզ յայտնի են եւ մեր զգացմունքները դէպի հաւատակից ռուսաց ժողովուրդը։ Այս սրբազան զգացմունքները առաքեցին մեզ մի անխոնջ եւ մեծահոգի Բարձր Պաշտպան, ի դէմս Ձեր Կայսերական Բարձրութեան։ Ընդունեցէք ուրեմն, Հայրենիքի Հօր Բարձր Ներկայացուցիչ, նահանգների ազնուականութեան կողմից աղ ու հաց եւ թոյլ տուէք մեզ, մեր պաշտելի Մեծ-Իշխան, տեսնելով Ձեզ այս նշանաւոր օրերում մեր մէջ, յայտնել մեր խորին ուրախութիւնը հնաւանդ ժողովրդական «վաշա» աղաղակով։» Ապա Մեծ Իշխան Միխայել Նիկոլաեվիչ բարեհաճեց ողջունել երկու նահանգների ազնուականութիւնը Թագաւոր Կայսրի կողմից հետեւեալ ճառով.—«Թագաւոր Կայսրը հրամայեց ինձ յայտնել ձեզ Իր ողջոյնը, բարեւը եւ ցաւը, որ Նորին Մեծութիւնը չէ կարող ներկայ լինել ձեր յոբելեանական հանդէսներին, մտադրված լինելով մօտ ապագայում այցելելու Կովկաս։ Ինչ վերաբերում է իմ զգացմունքներին,—նրանք ձեզ յայտնի են, ուստի եւ դուք կը հաստատաք, որ ես բաղդաւոր եմ, որ Թագաւոր Կայսրը բարեհաճեց նշանակել ինձ Նորին Մեծութեան Ներկայացուցիչ ձեր յոբելեանական հանդէսների ժամանակ»։

—

Կովկասեան Գիւղատնտեսական Կայսերական ընկերութիւնը սեպտեմբերի 30-ին կը տօնէ իր գոյութեան յիսնամեայ յոբելեանը։

—

Յոբելեանական տօնախմբութիւնների առիթով Ներսիսեան դպրոցում արձակուրդ տրվեց երկու օր, սեպտեմբերի 26-ին եւ 27-ին։ Գիմնազիաների եւ այլ դպրոցների աշակերտներին եւս երկու օրով արձակուրդ է տուած։

—

Մեզ հաղորդում են, որ ցուցահանդէս բերած ձիերի գնահատութեան գործը կամ էկսպերտիզան վերջացաւ եւ շուտով կորոշվի, թէ նրանք ինչ պարգեւների են արժանի։ Ձիերը բերված են ցուցահանդէս յիսուն հատ։

—

«Մշակի» երէկվայ համարում մենք հաղորդել էինք Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ պատահած դողութեան մասին։ Քննութիւնը պարզեց որ քաղաքային դրամարկղից գողերը տարել են ոչ 4,800 ռուբլի, որպէս կարծվում էր առաջ, այլ 592,000 ռուբլի արժողութեամբ քաղաքային երրորդ փոխառութեան օրլիգացիաներ եւ 9 հազար ռուբլի առձեռն դրամ եւ ըլնտաս։ Այս գործի պատճառով ձերբակալված են քաղաքային վարչութեան մէջ ծառայող գրագիրներ Եախչիբէկով, Ալավերդով եւ Տէր-Աբրահամով, նոյնպէս եւ հերթական պահապան Ցիրօնենկո։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թոյլ տուեց Կովկասեան ուսումնարանական շրջանի գիմնազիաների, բէալական ուսումնարանների եւ ուսուցչական սեմինարիաների աշակերտներին այցելել Թիֆլիսի յոբելեանական ցուցահանդէսը սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսների ընթացքում։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Մոսկվայի գաղութը, ի նկատի ունենալով, որ սեպտեմբերի 23-ին կը բացվի Գամառ-Քաթիպայի մահարձանը, իր ծխական ժողովի նիստում, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 16-ին, որոշեց ուղարկել պատգամաւորութիւն եւ դնել արծաթէ պսակ։ Պ. Ալէքսանդր Ծատուրեան՝ բացի այդ՝ առաջարկեց հանգանակել մէկ գումար եւ նշանակել մրցանակ Պատկանեանի ամենալաւ եւ բազմակողմանի կենսագրութեան համար, որի վճռումն արդիւնքը կը յայտնվի նրա ընտանիքին։ Այդ առաջարկը սիրալիր կերպով ընդունվեց։ Պատգամաւորներն են Մամիկոնեան, Ծատուրեան, Շահ-Ազիզ։ Վերջինիս հեռագրեցին Եալտա։ Տեղիս հայ-ուսանողութիւնը ուղարկեց «Մայր-Արաքսի» անմահ երգչին պսակ, ուղերձ, ընտրելով պատգամաւոր Ալ. Ծատուրեանին»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ ցորենի անաջող բերքից յետոյ, երեւում է, որ բամբակի բերքն էլ անաջող է անցնելու, որովհետեւ դեռ բամբակի առաջին երեսը չը ժողոված, արդէն սկսել են ցրաերը եւ անձրեւային օրերը, որոնք արդելում են բամբակի բացվելուն։ Խաղողի մասին էլ չենք խօսում, որովհետեւ թէ բերքն է շատ պակաս եւ թէ խաղողի գինն է ընկած։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Զը նայելով այն բազմաթիւ հերքումներին, որոնք երեւեցան լրագիրների մէջ, «Daily News» պնդում է, թէ զինուորական մինիստր Բրոդրիկի եւ լորդ Կիտչենէրի մէջ տեղի են ունեցել լուրջ տարաձայնութիւններ, որոնք կարող են վերջանալ Կիտչենէրի հրաժարականով անգլիական զօրքերի գլխաւոր հրամանատարի պաշտօնից հարաւային Աֆրիկայում։ «Daily News»-ի ասելով, Կիտչենէրի ընդհարումները կառավարութեան հետ սկսվել են շատ վաղուց։ Կիտչենէր, որպէս գործունեայ, ձեռնարկող եւ անընկճելի եռանդի տէր անձն, չափազանց դժգոհ էր այն արգելքներից, որ հանում էր նրա առաջ անգլիական կառավարութիւնը։ Գլխաւոր հրամանատարը գանգատվում է այն բանից, որ կառավարութիւնը բաւականաչափ ուշադրութեամբ չէ վերաբերվում նրա պահանջներին, որ նա ուղարկում է հարաւային Աֆրիկա բոլորովին անպէտք նորակոչ զինուորների, որոնք միայն վնաս են տալիս, եւ որ լաւագոյն զօրապետները պաշտօն են ստանում հարաւային Աֆրիկայի սահմաններից դուրս։ Այս պայմանների մէջ լինելով՝ Կիտչենէր հնարաւոր չէ համարում մնալ իր պաշտօնում։ Ուշադրութեան առնելով այս հանգամանքները, Էդուարդ VII, Եւրոպայի ցամաքից վերադառնալուց յետոյ, ժողովի հրաւիրեց բոլոր մինիստրներին եւ այդ ժողովում հարց բարձրացրեց Կիտչենէրի դրութեան մասին։ Ասում են, թէ Էդուարդ թագաւորը խիստ եռանդուն դիրք բռնեց այդ հարցում եւ մինիստրները, մանաւանդ Բրոդրիկ, որ տեսնվել էր թագաւորի հետ ժողովից առաջ, հարկադրված էին ենթարկվել խիստ հարցուփորձի իրանց դիտաւորութիւնների մասին ընդհանրապէս եւ առանձնապէս նորակոչ զինուորների վերաբերմամբ։ Առ այժմ յայտնի չէ, թէ ինչ է որոշված մինիստրների ժողովում, բայց մի բան հաստատ կարելի է ասել, որ եթէ Կիտչենէր մնայ իր պաշտօնում, այդ դէպքում կարելի է սպասել նշանաւոր անցքերի հարաւային Աֆրիկայում։

—«Berliner Tageblatt» լրագրի ստացած տեղեկութիւններով Կ. Պոլսից, ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասսէ եւ ռուսական մինիստր Լամզդորֆ, Կոմպիէնում տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ, երկար քննադատում էին իրերի այժմեան դրութիւնը Թիւրքիայում եւ մանաւանդ նրա ֆինանսական վիճակը։ Նրանք եկան այն եզրակացութեան, որ այժմ անյարմար ժամանակ է միջոցներ առաջարկելու Թիւրքիայի ֆինանսական վիճակի բարւոքման համար։

—Սերբիական կիսապաշտօնական «Дневникъ» լրագիրը հերքում է այն լուրերը, որոնք տարածված էին վերջին ժամանակ սերբիական թագուհի Դրագայի եղբօրը, Նիկոդիմ Լունեվիչին, սերբիական գահաժառանգ նշանակելու մասին։ «Թագաւորը երիտասարդ է եւ առողջ,—ասում է լրագիրը,—եւ առ այժմ ոչ մի հիմք չը կայ երկիւղ կրելու, որ արքայական զոյգը որդիք չի ունենայ։ Քանի դեռ այդ յոյսը կայ, քաղաքագիտական վարժունք չէ առաջ բերել անօգուտ բարդութիւններ, նշանակելով հէնց այժմեանից գահաժառանգ։ Իսկ եթէ արքայական զոյգը կը մնայ անզաւակ, գահաժառանգութեան հարցը կարող է վճռվել միայն սահմանադրական ճանապարհով, այսինքն ժողովրդի համաձայնութեամբ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 սեպտեմբերի

ԲԵՐԼԻՆ։ Սեպտեմբերի 22-ին, երեկոյեան, հրատարակված է յայտարարութիւն ռուսական հարաւ-արեւելեան երկաթուղիների 4% օրլիգացիաների մասին, որոնք ազատ կը լինեն տուրքերից։ Օրլիգացիաների արժէքի գումարը հասնում է 32,000,000 մարկի։ Ստորագրութիւնը—սեպտեմբերի 27-ին։ Հրատարակման կուրսը Գերմանիայում 96 տոկոսն է կազմում։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ։ Սեպտեմբերի 23-ին աւագ-քահանայ Իզրաելցիով օծեց ռուսադաւանների եկեղեցին։ Օծմանը ներկայ էին հանրապետութեան նախագահ Ռոկա, մինիստրները եւ դիպլոմատական մարմինը։

Կ. ՊՕԼԻՍ։ Ֆրանսիական դեսպանական գործերի հաւատարմատարը յանձնեց մի յայտագիր, որով Ֆրանսիան մերժում է Բ. Դրան առաջարկութիւնը պակասեցնելու մասին այն պարտքը, որ պահանջում է Լօրանդօ, 185,000 ֆունտ ստերլինգով եւ պահանջում է վճարել 345,000 ֆունտ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

որանով յայտարարում է, որ նրա դիւանատունը 1901 թւի հոկտեմբերի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու հետեւեալ աշխատանքները,—քարայատակել 1) Արսէնալնի խճուղին 800 քառ. սաժ. տարածութեամբ, 2) Լազարեան փողոցը, 300 քառ. սաժ. տարածութեամբ, 3) Կախէթի խճուղին՝ 800 քառ. սաժ. տարածութեամբ, եւ 4) ճանապարհը երկաթուղու գծից մինչեւ այնտեղ, ուր կտրում են միմեանց Կապէրովսկայա եւ Անտոնիեվսկայա փողոցները, 315 քառ. սաժ. տարածութեամբ, ընդամենը 5500 ռուբլի գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամի 9 ից մինչեւ 3-ը։ 1—3

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

հաղորդում է ի գիտութիւն այն անձանց, որոնք կամենում են մասնակցել համաժողովին, որ վերջինը բացվում է հոկտեմբերի 14-ին, ցերեկվայ ժամի 12-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ։

Տեղեկութիւններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ժամի 10-ից մինչեւ 12-ը՝ ցուցահանդէսի երկրագործական բաժնում՝ համաժողովի գործավար պ. Վիշնեվսկուն, իսկ յետոյ՝ մինչեւ ժամի 3-ը՝ Գիւղատնտեսական ընկերութեան բիւրոն։

(սեպ. 26, հոկտ. 3 եւ 10) 1—3

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

տալիս է մասնաւոր դասեր՝ հայերէն եւ գերմաներէն լեզուներից, նոյնպէս հայոց գրականութիւնից. հաճոյէն հարցնել «Մշակի» խմբագրատանը։ 4—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—1¹—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մրզատեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզեղիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանատեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Դ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲՐԻՍՍԵԼԻ ԿՕՆՍԵՐՎԱՏՕՐԻԱՆ ԱԻԱՐՏԱՏ

հռչակաւոր ջուրթակահար Տօմսօնի աշակերտ

ԴԱՒԻԹ ԴԱՒԹԵԱՆ

Պատրաստում է ջուրթակի վրա արտասահմանեան կօնսէրվատօրիաների համար աշակերտներ։

Դիմել՝ Серебряный рядъ, д. Ходжіева, № 4, противъ православной семинаріи. 4—4

ՆԱԻԹԼՈՒՂՈՒՄ

ԾԱԽՎՈՒՄ Է ՀՈՂ

554 քառ. սաժէն տարածութեամբ, չինութիւններով։

Այնտեղ վարձով է տրվում բնակարան հոկտեմբերի 15-ից, չորս սենեակներից բաղկացած։ Մանրամասնութիւններն իմանալ հետեւեալ հասցէով. Судебная, № 1, 4-ից մինչեւ 6 ժամը երեկոյեան։ Այդտեղ էլ ծախվում է կանացի թաղ։ (հ. կ.) 3—3

ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՑ ՂԱՄԱՉԵԱՆՑԻ ԳՐՔԵՐԸ

վաճառվում են իր եւ Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ հետեւեալ գներով

«Համառօտ քարոզներ» . . . . 1 ր. — կ.
«Քրիստոնէական վարդապետութիւն» » 20 »

Շուտով լոյս կը տեսնէ Համառօտ եկեղեցական պատմութիւն։ 4—4

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

Սրբուհի Խօջամիրեանը բնակվում է Կազբէկսկայա փողոցում, № 19 տան մէջ։

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱՇԸ

երեսին քնքշութիւն եւ ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ ապիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ օրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 75—100

Սոյն սեպտեմբեր ամսի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին,

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ

նշանակված է աճուրդ

վաճառելու չինութեան զանազան հին փայտեայ նիւթեղէնները եւ աշակերտական նըստարաններ՝ 187 ռուբլի 95 կոպէկի։ Այդ իրերը եւ նրանց ցուցակը կարելի է տեսնել դպրոցում ամենայն օր։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ

աւագների խորհրդի որոշմամբ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

տեղափոխվում է իր ձմերային բնակարանը սեպտեմբերի 29-ին։ 1—2

Մամուլի տակից դուրս եկաւ եւ վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

„ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ“

գինն է 50 կոպէկ։

Նոյն գրատանը վաճառվում են հեղինակի եւ միւս աշխատութիւնները.—«ՍԱՆԹՕ», վէպիկ հայ բոշաների կեանքից—գ. 30 կոպ., «ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ» ազգագրական ուսումնասիրութիւն—գ. 50 կոպ. եւ «ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐ»—գ. 5 կոպ.։ Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։

Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (չ.) 1—10

ԲԺԻՇԿ

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

վերադարձաւ արտասահմանից եւ առաջվայ պէս ընդունում է ցերեկվայ 12—2 ժամը եւ 6—9 ժամը երեկոյեան մրզատեռական, վեներական եւ սիֆիլիտիական հիւանդութիւն ունեցողներին։ 2—3

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԵՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների չինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնադրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվօրցօվայա Նօվէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։ 3—100

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ՎՏԱԿ“

Գրական-բանասիրական ժողովածու։

Գինն է 1 ր. 50 կ., ճանապարհածախսով՝ 2 ր., փառակազմ՝ 2 ր. » 2 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 2—3

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է տնային վարժուհու պաշօն ստանալ Թիֆլիսում կամ այլ քաղաքում, 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների հետ պարապելու համար։ Կը կամենար նաեւ կօմպանիօնկա լինել մի տիկնոջ։

Հասցէն՝ Театральная улица, Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами· Спросить казначея Петрова. 3—6

ՅՈՎՍԵՓ ՄԱԼՈՒՄԵՍՆՅԻ

ԲԱՂԴԱԴԻ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ՊԱՏՐԱՍՏԱԾ ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ

Целлюлярная грена, приготовленная по системѣ Пастера.

Կարելի է դիմել՝ Тифлисъ, Лорисъ-Меликовская ул. д. № 11. Галусту Галустянцъ. կամ Черезъ Ордубатъ, село Мегры, Іоакиму Малумянцу. (չ) 9—15

Հաշուապահութեան եւ գրասենեակային տեղեկութիւնների Կուրսեր

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԿԻՑ

(Երկրորդ տարի)

Երկու սեռի գրագէտ անձանց համար

եւ

Գործնական դասեր ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ հասակաւորների համար

Պարապմունքների սկիզբն է հոկտեմբերի 2-ին։ Մանրամասնութիւնները իմանալ Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում (Զուղուրէթ, սեփական տուն) ամենայն օր, ժամի 9-ից մինչեւ 2-ը։ Կիրակի օրերը—ժամի 12—2։ 3—12

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ VI ՇՐՋԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԾԻՐԱՁԵԱՆԻ

Ուսուցանում եւ պատրաստում է 4 ամսվայ ընթացքում։

Պարապմունքի առարկաներն են.—1) Կրկնահատական հաշուապահութիւն։ 2) Առեւտրական թուաբանութիւն։ 3) Թուաբանութիւն հատրիչի վրա։ 4) Բանկային հաշուապահութիւն ըստ ամենայն ճիւղերի։ 5) Առեւտրական նամակագրութիւն։

Պարապմունքները սկսվելու են 10-ին սեպտեմբերի, 1901 թ-ին։ Կարելի է տեսնել ժամի 4-ից մինչեւ 8-ը երեկոյեան։ Հասցէն. անկիւն Էկզարխի հրապարակի եւ Ակիմովսկի փողոցի, տ. իշխ. Շերվաշիձէ № 14։ (չ. կ.) 1—9

Պատուական ռուսերեն յայտնելու յարգելի հասարակութեան եւ վաճառականներին,

որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԷ ԿԱԼՕՇՆԵՐ

ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց եւ երեխաների։ Ուստի խնդրում եմ յարգելի առնողներին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք։ Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բաւական զիջում։ Նոյնպէս ստացել ենք ՊՐՕՎՕԴՆԻԿ կոչված ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի։ Պատուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին։ Մեզ մօտ ծախվում են նոյնպէս կոշիկները փափկացնող իւղեր եւ փայլ տուող գունաւոր գլաղուրներ։ Նոյնպէս ծախվում են արտասահմանի եւ Ռուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ եւ կօշկակարական ամեն տեսակ գործիքներ։

Մեր Հասցէն. Тифлисъ, Армянскій базаръ, Братья Яргуловы.
Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргулянцъ.
(չ. կ.) 15—20

Սարգիս Վ. Աբրահամեան

Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորիչ օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Հասցէն՝ ՍՕԼՕԼԱԿ, Գանօվսկայա եւ Սադովայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 23—25

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից, մենպանսէ, մարմելադ, պաստիլա, զէֆիր եւ այլն։

Պատուէրներով դիմել գործարան. Պավլովսկայա փողոց, սեփական տուն, տելէֆոն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տանը, տելէֆոն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլոնիական խանութներում։

Բագուի եւ Բագուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։ 56—100

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Сентября 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.